



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՕՄԻ
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ**

Երեքշաբթի, 8 Յուլիսի յետմիջօրէին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Ազգ. Առաջնորդարանին մէջ ընդունեց ՀՕՄԻ Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան անդամներու այցելութիւնը: ՀՕՄԻ ներկայացուցիչները, գլխաւորութեամբ Շրջ. Վարչութեան ատենապետուհի Տիկին Սօնիա Փելթեքեանի, եկած էին Առաջնորդ Սրբազանը շնորհաւորելու չորրորդ քառամեակի մը համար Առաջնորդ վերընտրութեան առիթով: Հանդիպումին ներկայ եղաւ Ազգ. Վարչութեան ատենապետ Տոքթ. Կարօ Յակոբեան:

Առաջնորդ Սրբազանը շնորհակալութիւն յայտնեց այս այցելութեան ու արտայայտուած բարեմաղթութեանց համար: Հանդիպումը առիթ եղաւ խորհրդակցելու ՀՕՄԻ բազմաճիւղ ծառայութիւններուն մասին, մանաւանդ որ երկու օր ետք, Հինգշաբթի, 10 Յուլիսին, Ազգային Առաջնորդարանի «Տիգրան եւ Չարուհի Տէր Ղազարեան» սրահին մէջ նախատեսուած էր ՀՕՄԻ Շրջանային Ժողովի բացման նիստը: Առաջնորդ Սրբազանն ու հիւր պատուիրակները այս նիստը նկատեցին մարմնաւորումը ՀՕՄԻն ու Ազգ. Առաջնորդարանին միջեւ սերտ գործակցութեան:

Առաջնորդ Սրբազանը բարձր գնահատեց ՀՕՄԻ տարած աշխատանքը՝ մեր Թեմին, հայկական տարբեր գաղութներու եւ նոյնիսկ մայր հայրենիքին մէջ: Ան նաեւ դրուատիքով անդրադարձաւ ՀՕՄԻ այն նուիրաբերումին, որ յատկապէս վերջին ամիսներուն տրամադրուած է Իրաքի տագնապահար հայութեան եւ որուն իր զօրակցութիւնը տրամադրեց Ազգ. Առաջնորդարանը: Ան մաղթեց, որ ՀՕՄԻ աշխատանքները ընդարձակուին ու մեր ժողովուրդը մշտանորոգ ու յաւելեալ զօրակցութեամբ նեցուկ կանգնի ժողովրդանուէր ու հայրենանուէր գործին:

**PRELATE MEETS WITH MEMBERS OF A.R.S.
REGIONAL EXECUTIVE**

On the afternoon of Tuesday, July 8th, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy members of the Armenian Relief Society Regional Executive. The delegation, headed by Chairlady Mrs.

Sonia Peltekian, had come to congratulate the Prelate on his re-election. Executive Council Chairman Dr. Garo Agopian also participated in the meeting.

The Prelate and guests discussed the wide-ranging services offered by A.R.S., as well as the upcoming regional convention, the opening of which is scheduled to take place at the Prelacy "Dikran and Zarouhie Der Ghazarian" Hall on Thursday, July 10th.

The Prelate highly commended the charitable works of A.R.S. within the Diaspora and Armenia, especially the recent aid offered to the Armenians of Iraq to which the Prelacy lent its support, and wished them success in their future endeavors